Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ ԹԻՎ 178-Ա-180-Ա, 183-Ա ԵՎ 188-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 178-Ա որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում «բառերով» բառից հետո անհրաժեշտ է գրառել «և թվով»:

Թիվ 179-Ա որոշմամբ կատարված փոփոխությունները անհրաժեշտ էր գրառել առանձին դրույթներով:

Թիվ 179-Ա և թիվ 188-Ա որոշումների վերնագրերը անհրաժեշտ էր գրառել. «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ»:

Թիվ 180-Ա որոշման մեջ գրառում չի կատարված ՀՀ կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված համայնքի ղեկավարի եզրակացության վերաբերյալ:

Թիվ 183-Ա որոշումը թերի է գրառված: Որոշման մեջ նշված չէ, թե երբ է հողամասը տրամադրվել կառուցապատման նպատակով և քանի տարով: Բացի այդ, անհրաժեշտ էր փոփոխություն կատարել նշված հողամասը կառուցապատման նպատակով տրամադրելու վերաբերյալ իրավական ակտում:

Կատարող՝ Նաիրա Մարտիրոսյան
17.12.2020թ.